



ԱՐՄԵՆ ԾԱՅՐ. ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ

(Փիլիսոփայության դոկտոր)

ՀԱՅ ԱՆԳԼԻԿԱՆՆԵՐԸ ԺԹ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ*

Ա. մաս

19-րդ դարի սկզբներին բոլոքական միսիոներական շարժումները ընդարձակվում են և հասնում մինչև Օսմանյան կայսրության սահմանները: Ամբողջ Միջին Արևելքում, ընդհուպ մինչև եւլորպական և ասիական Թուրքիա և նոյնիսկ մինչև Կովկաս, հաստատվում են բազմաթիվ միսիոներական կենտրոններ:

Բրիտանացի միսիոներները գործոն մասնակցություն են ունենում այս շարժման մեջ: Օսմանյան կայսրությունը մի նոր բերրի դաշտ է հանդիսանում նրանց գործունեության համար:

* «Հշմանակ» ամսագրի լճարեցողմերի ուշադրության ենք ներկայացնում Մայր Աթոռի միարան տ. Արտեն ծ. Վարդապետ Բերերյանի 1972 թվի փիլիսոփայության դոկտորի աստիճան ստանալու համար Լոնքրնի համալսարանի Կիմք Կոնժին ներկայացրած «Անգլիկան եկեղեցու և հայերի միջև հարաբերությունները 1841—1905 թվականներին» անգլիական լեզվով գրած ավարտանադի ամփոփումը խարգմանարար:

S. Արտեն ծ. Վարդապետը 1972 թ. օգոստոսին Լոնքրնում պաշտպանեց իր ավարտանադի և 1973 թ. մարտին Բանհիսավոր իրադրության մեջ ստացավ փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան:

Միսիոներական զանազան ընկերություններից և կազմակերպություններից բացի, անգլիկան եկեղեցին ունենում է իր եպիսկոպոսարանը Երուաղեմում, որը նոր էջ է բաց անում ինչպես անգլիկան, այնպես էլ հայ եկեղեցու պատմության մեջ, քանի որ դրանով է սկսվում երկու եկեղեցիների հարաբերությունների պատմությունը: Պրուսիայի Ֆրեդերիկ Ուիլհամ 4-րդ թագավորը առաջին անգան է լինում, որ Անգլիո եկեղեցու ղեկավարներին առաջարկում է հաստատել անգլիկան մի եպիսկոպոսարան Երուաղեմում: Թագավորի կենացքիները վկայում են, որ նա դեռ երիտասարդական տարիներից փայփայում էր այն գաղափարը, որ բողոքականները սուրբ երկրում պետք է ունենան պատշաճ տեղ և այդ եպիսկոպոսարանի միջոցով պետք է ստեղծեն, ի թիվս արևելյան եկեղեցիների, բողոքական գործունեությանց կենտրոն, որը բողոքականների համար պետք է ունենա օրինական ճանաչում և հավասար իրավունքներ կայսրության մեջ: Նա իր մտքում ուներ մի այլ ծրագիր ևս. ուզում էր մի ապահով կենտրոն ունենալ հրեաներին մեջ՝ միսիոներական գործունեություն ծավալելու համար:

Անգլիան եկեղեցին և Բրիտանական կառավարությունը այս առաջարկի մեջ շահեր տեսնելով, իրենց համաձայնությունն են տախի՝ հաստատելու եպիսկոպոսարանը: Անգլիան եկեղեցին մտածում է, որ եթե մի կենտրոն ունենա Պալեստինում, ապա կիարողանա հեշտությամբ միանալ իրեա քրիստոնյա սակավաթիվ համայնքների մեջ՝ պամերով սակայն իր ճշմարիտ անգլիան կառուցվածքը: Այսպիսով, անշատ քրիստոնեական համայնքների միաձումը պիտի ապահովեր անգլիաների համար մի նախապատվություն և նրանք ձեռք պիտի բերեն և Հակորի աթոռը և պիտի նկատվեն առաքյալի հաջորդները:

Այս հավակնությունները դեռևս ժամանակին ծաղրանքի նյութ են դառնում բողոքական միսիոներների կողմից և նրանցից մեկը հեգնանքով գրում էր, որ առաջայների հաշորդողներից մեկը, օրինակ՝ Քենտրոնքերի արքեպիսկոպոսը, մի օր պետք է գրի մի նոր թողթ՝ ուղղված իրեաներին:

Եպիսկոպոսարանի համար, ակզրնական շրջանում, իրար հաշորդող եպիսկոպոսներ են ձեռնադրվում, որոնցից առաջինը՝ Ալեքսանդր եպիսկոպոսը (ձեռնադրված 1841-ին և մահացած 1845-ին), նախապես եղել է իրեա ուսքի, հետագայում դարձել է դեսպիս քրիստոնությունը, սակայն իր խառնվածքով մնացել իրեաներից ավելի իրեա: Երկրորդը՝ Կոպատ եպիսկոպոսը (որը ձեռնադրվել է 1846-ին և մահացել 1879-ին), Պրուսիո թագավորի թեկնածուն է եղել: Սա ծագումով ոչ գերմանացի և ոչ էլ անգլիացի է եղել, այլ շվեյցարացի: Երրորդը՝ Պարզել եպիսկոպոսը (որը ձեռնադրվել է 1879-ին և մահացել 1881-ին), անգլիացի էր:

Մյուս կողմից՝ Բրիտանական կառավարությունը այս ձեռնադրկած քայլի մեջ տեսնում էր իր այնքան ցանկալի ծրագրի իրագործումը: Նրա նպատակն էր Օսմանյան կայսրության մեջ ունենալ մի կարևոր կրույս: Արքայական մի նամակով Ալեքսանդր եպիսկոպոսի մեկնումը Պաղեստին ինքնին ապացուց էր այն բանի, որ այնտեղ մոտաք էր գործում մի քաղաքական գործիք:

Նոր եպիսկոպոսարանը ուներ երկու հիմնական նպատակ՝ Օսմանյան կայսրության մեջ առավել ամրապնդել անգլիան եկեղեցու և Բրիտանական կայսրության քաղաքական շահերը:

Լատիները և հուները Ալեքսանդր եպիսկոպոսի մոտքը Երուսաղեմ դիտում էին որպես Բրիտանական կառավարության կողմից ձեռնադրված մի շարժում՝ ստեղծելու մի «Անգլիական կուսակցություն»

սուրբ երկրում: Սակայն Ալեքսանդրի գործունեությունը իր հաջորդի՝ Կոպատ եպիսկոպոսի հետ համեմատած Երուսաղեմում մնում է անշատ:



Կոպատ եպիսկոպոսը, լինելով ֆրանսախոս շվեյցարացի, գիտակ է եղել նաև անգլիաներին, գերմաներենին և արաբերենին: Նա պատկանելիս է եղել Ծվեյցարիայի Բարեհիմայալ եկեղեցուն և իրքն միսիոներ, Լոնդոնից ուղարկվել է Եթովպիտիա, Լիբանան, Պաղեստին, Մալթա, Եգիպտոս: Նա մի արկավագ է եղել, երբ հրավեր է ստացել ձեռնադրվելու եպիսկոպոս Երուսաղեմի համար՝ Լոնդոնի եպիսկոպոսի ձեռամբ:

Կոպատի հակառակորդները Էկվաթրի եպիսկոպոսի գիտակորությամբ, բողոքում են Քենտրոնքերի արքեպիսկոպոսի՝ Եթովպիտացում նրա ունեցած ելույթների համար, նրան մեղադրում հերետիկության մեջ, ինչպես նաև նրա Ալեքսանդրի համար: Բայց Կոպատը ճարպկությամբ կարողանում է արդարացնել իրեն: Ձեռնադրության օրը, սակայն, հակառակորդները մի փաստաթանի միջոցով պատրաստում են իրենց մեղադրաները, որպեսզի դրանք ընթերցեն

ձեռնադրության պահին: Բայց կանխելու համար նման մի անախորժություն՝ ձեռնադրությունը նետագձվում է և տեղի է ունենալ մի քանի օր նետու մի առանձին մատուցում:

1846 թ. Կոպատը հասնում է Երուսաղեմ: Նա այցելում է հովանաց և հայ պատրիարքելիքին, սակայն անտեսում է լատինելիքին: Նրա առաջին գործն է լինում տեղեծի անգլիկան բողոքականելիքի մի խումբ: Մահմետականելիքի մեջ՝ պվետարանելը նրա ծրագրից դրու էր: Այդ նպատակով նա հավաքում է ամեն տեսակի անձանց՝ Ավետարանը նեթերցելու համար: Այս ձևով միմբ է դնում մի դպրոցի, որ հավաքվում են տարբեր ազգություններից որբեր: Հոյելերը բողոքում են իշխանություններին՝ այդ դպրոցի ստեղծման դեմ, Կոպատին սպառնում, որ հետո մնա տեղի քրիստոնյաներին դավանափոխ անելու փորձից, բայց վերջին հայտարարում է, որ ով իրեն կդիմի դավանափոխ լինելու համար, ինչը ստիպված է ընդունել նրանց: 10 տարի հետո Օսմանյան կայրության կողմից հոչակված օրենքը, որով քաղաքացիական հավասար իրավունքներ էին տրվում քրիստոնյաներին, ուստի ազատ գործունեության լայն հնարավորություն էր տրվում նաև Կոպատին: Ի վերջ Կոպատին հաջողվում է ընդարձակել իր գործունեության դաշտը՝ հիմնելով այլ դպրոցներ և ավելի զորացնելով եպիսկոպոսարանը, ունենալ երիտասարդ պվետարանին, որոնք պատրաստվում էին նրա հակուլության ներքո: Սակայն զարմանալին այն է, որ Կոպատի առաջին համոզված պվետարանիները լինում են ոչ թե անգլիացիները, այլ հայերը, այդ թվում Տիարպերիցի մի երատասարդ քարոզիչ՝ Կարապետ Ստեփանյան անունով:

Կարապետ Ստեփանյանը բողոքական համայնքի կողմից ուղարկվում է Երուսաղեմ, որպեսզի Կոպատ եպիսկոպոսից խնդրի իրենց համայնքի համար մի քարոզիչ: Կ. Ստեփանյանը ինքն է լինում այդ քարոզիչը, սակայն թե ինչպես, այդ այնքան էլ պարզ չէ: Երուսաղեմում նա Յ տարի Կոպատի դպրոցում մնալով՝ ձեռնադրություն է հովիվ և իշխանություն է ստանում քարոզելու Ավետարանը ամբողջ Օսմանյան կայսրության մեջ: Կ. Ստեփանյանը, համաձայն իր նամակի, վերադառնարվ Տիարպերի, մկրտում է շորջ 300 երեխաների՝ անգլիկան ծեսի համաձայն, որը և իրու շոշափելի ասպարուց, օգտագործում է հետագայում՝ իրավունք տարով ինքն իրեն խուսելու ինչ-որ անգլիկան հայ համայնքի գոյության մասին:

Կոպատ եպիսկոպոսի երկրորդ առա-

յալը լինում է հայ եկեղեցու արքեպիսկոպությունից մեկը՝ Մկրտիչ Շահինյանը՝ Այնայի 12 տարվա առաջնորդը, Սահ կաթողիկոսարանի միաբան, իսկ երրորդը՝ Ավետին Կարպուջյանը, որը իր կրթությունն ստանում է Քեմբրիջում: Այս բոլորից նետու Կոպատ եպիսկոպոսը ժամանակը հասած է համարում սկսելու համար իր քարոզությունը հայերի մեջ, քանի որ արդեն ուներ երեք մոլեուանդ օգնականներ, որոնք պատրաստ էին նվիրվելու անգլիկան եկեղեցու քարոզությանը հայ համայնքների մեջ:

Նախքան այս քարոզիչների կատարած գործունեության նկարագրությանն անցնելը, երկու խոսքով ասենք, թե ինչո՞ւ Տիարպերի բողոքական հայերը իրենց համայնքին հովիվ ապահովելու համար դիմեցին անգլիկան եկեղեցու եպիսկոպոսին և ոչ թե ամերիկյան միսիոներներին, որոնք արդեն կես դար շարունակ տարածում էին բողոքականությունը հայերի մեջ, դրամի և նպատակի ուժով:

Հայկառակ այն իրողության, որ բողոքական համայնքները համեմատարար ավելի արտոնություններ ունեն որոշ գավառներում, քան մյուս քրիստոնյաները, այսուամենայնիվ 1860-ական թվականներին արդեն սկսելու էին դժգոհություններ ամերիկյան միսիոներական միավորների նկատմամբ: Այդ մասին կան գրավոր բազմաթիվ վկայություններ, սակայն մենք միայն մեկին դիմելով կներկայացնենք ստորև ժամանակի իրական կացությունը:

Զյուտնեայի հայ ավետարանական համայնքի հովիվը, ոմն Խճռատիսյան, Քենտրոնքի արքեպիսկոպոսին ուղղված իր համակում դժգոհություն է հայտնում ամերիկացի միսիոներների նկատմամբ: Այդ դժգոհությունը նա ներկայացնում է ոչ թե որպես անձնական դժգոհություն, այլ որպես իրական արտահանություն իր համայնքի տրամադրությունների: Դժգոհության պատճառը իրեն թե արևմտյան ծիսակատարություններն էին, որոնք խորթ և անհարազար էին հայերի համար: Դժնատիսյանը համեմատության մեջ դնելով այդ ծիսակատարություններ հայոց մայր եկեղեցու ծիսական հարգի հետ, գտնում է, որ միայն անգլիկան եկեղեցին կարող է լիովին գոհացում տալ իրենց պահանջներին, քանի որ նա և ուներ ծիսական այն կարգը, ինչ որ կար հայ եկեղեցում:

Եթե դիմենք լևոն Արքիին, կտեսնենք, որ նա էլ հայ բողոքականների պատմության մասին իր գրած գրքում շեշտում է հայերի դժգոհությունը ամերիկացի միսիոներների կողմից ներմուծված ծիսական և այլ կարգի ստորովագրությունների նկատմամբ,

որոնք իրենց օտարուսի նկարագրի պատճառով չէին կարող հոգեկան բավարարություն տալ նրանց: Հաս նրան, այդ էր հիմնական պատճառը, որ բողոքականներից ունակը վերադառնում էին դեպի մայր եկեղեցին: Մյուս կողմից՝ Արքանայի հովիլ Օ. Բան Դավիթյանը The Edinburgh Courier-ի մեջ, լուր ընծայած մեկ հայուսարությամբ նոյնպես նշում է այն պատճառները, որոնք հայ բողոքական համայնքներին ասիստում են հարել անգլիկան եկեղեցուն:

Մինչեւ իրական դժգոհությունը կայանում էր նրանում, որ հայ բողոքական համայնքները Բարձր Դուռն կողմից չէին ճանաչվում իրեն ազգային առանձին համայնքներ, այլ, ինչպես ամերիկացիները, Ավատվում էին իրեն լոկ բողոքական-կրոնական համայնքներ: Այս պարագան հայ բողոքական դեկազրներին մկնել էր անհանգուացնել, որ իրենց եկեղեցիները չունեն հայկական դրոշմ 'և իրենք իսկ չեն Ավատվում իրեն հայեր:

Ամա թե ինչո՞ւ 1857 թվականին Տիարաբերի և ապա՝ 1865—1866 թվականներին Այնթապի և Մարտի բողոքական հայ համայնքները, թվով շորջ 1000 հոգի, միանում են անգլիկան եկեղեցուն: Այս շարժմանը հետևում են Բիթլիսի, Խարբերդի և հայկական այլ գավառների բողոքականները, բայց նրանք, հիմնականում չունենալով անգլիկան հովիլներ, մնում են իրենց նախկին վիճակում:

Վերադառնալով Կոպատի գործունեությանը, մեր ձեռքում եղած փաստաթղթերի հիման վրա, եկեղեց ենք այն եզրակացության, որ առաջին համայնքը, որ հարեց անգլիկանությանը, Տիարաբերի հայ բողոքական համայնքն էր՝ գուխ ունենալով Կ. Սուեփանյանը իրեն հովիլ: Պարզելու համար, թե ինչո՞ւ այս համայնքը հարեց անգլիկաններին, խոսք տանք հենց իրեն՝ Կ. Սուեփանյանին, որն իր նամակներից մեկում (գրված 1882 թվականին և ողղված Քենտրոների արքեպիսկոպոս Թեյթին) ասում է հետևյալը.

«Զգուշորեն կարդալու և քննելու հետո անգլիկան եկեղեցու հիմնական մեզրուները, աղոթագրքի և հավատքին նվիրված հովածները գտանք, որ դրանք բոլորը շատ ճիշտ են և արժեն մեծապես ընդունել որոնք հարազատ են ճշմարիտ Առաքելական եկեղեցուն, հետևաբար մենք, մեծ թվով հայեր, անմիջապես ստիպված էինք բաժանվել մեր հին եկեղեցուց, հավաքվել մի տեղ և աղոթել նոյն աղոթագրքի օգնությամբ»:

Այս փաստաթղթից պարզվում է, որ այդ

նամայնքներում Կ. Սուեփանյանը եղել է շրջիկ բարողիշ և եռանդուն գործիչ: Մի օր նա հանդիպում է Այնթապի առաջնորդ Մկրտիչ արքեպիսկոպոս Շահինյանին և նրան համոզում, որ վերջինս հարի անգլիկան եկեղեցուն:

Այնթապի բողոքական հայ համայնքը, որ սկիզբ է առել 1845 թվականին դավանակուում մի հայ քահանայի քարոզութամբ, հանդիսանում էր ամենաուժեղ բողոքական կենտրոններից մեկը Թուրքիայում:

Երբ ամստեղ ևս սկսվում են բողոքական համայնքների մերքին խրստումները, Մկրտիչ արքեպիսկոպոսը, որն արդեն հեռացել էր իր մայր եկեղեցուց և Երևանի եմում Կոպատ եպիսկոպոսի մոտ մի քանի տարի մնացել անգերեն լեզուն և անգլիկան եկեղեցու ծեսերը սվորելու համար, վերադառնում է Այնթապ և գործած անցնում այն բողոքականների, որոնք ցանկանում էին իրենք իրենց անգլիկաններ հոչակել:

Մկրտիչ արքեպիսկոպոսը սկզբնական շրջանում մեծ հաջողությունների է հասնում, բարձր դրույց ձեռք բերում արտոնություն՝ առանձին եկեղեցի կառուցելու: Կոպատ եպիսկոպոսը նրան այդ նպատակի համար տրամադրում է 1000 անգլ. ֆուն ստեղինք: Կառուցման աշխատանքները սկսվում են, հակառակ այն բանի, որ բողոքական համայնքները ամերիկացի միսիոներների դրդումով բուռն բողոքներ էին բարձրացրել: Եկեղեցու շենքի կառուցումը կիսավարտ վիճակում է լինում, երբ Կոպատ եպիսկոպոսը վախճանվում է 1879 թվականին Երևանի եմում:

Կոպատ եպիսկոպոսի հաջորդ Բարձր եպիսկոպոսը պաշտոնավարում է միայն երկու տարի, առանց արդյունավետ գործունեության: Խոկ Վերջինիս հաջորդող եպիսկոպուր հայերին դավանակուում անելու խնդրում վարում է բողորովին այլ քաղաքականություն:

Մկրտիչ արքեպիսկոպոսի դժվարությունները օրակուր շեշտվում են և եկեղեցին մնում է անավարտ՝ դրամի պակասի պատճառով: Այս ծանր վիճակից դուրս գալու նպատակով Մկրտիչ արքեպիսկոպոսը դիմում է անգլիկան եկեղեցու դեկազրներին խնդրելով նյութական օգնություն՝ եկեղեցու շենքի և իր ապրուսի համար:

1879-ի հոկտեմբերին Մկրտիչ արքեպիսկոպոսը գնում է Լոնդոն: Երկար սպասելուց հետո, ի վերջո ընդունվում է Քենտրոնը բերիի արքեպիսկոպոսի կողմից: 1880 թ. փետրվարին Մկրտիչ արքեպիսկոպոսի և անգլիկան եկեղեցու պետի միջև տեղի է ունենում հատուկ մի հանդիպում՝ Լամբետի գրադարանում, որտեղ խոստումներ են տղր-

վուի օժանդակելու Մկրտիչ արքեպիսկոպոսի առաքելությանը: Այդ շարժմանը նպաստող մի դրամագույն է հասկացվում: Սույն հանդիպման նկարագրությունը հրատարակում է նույն թվի փետրվարի 27-ին Լոնդոնի «Թղթ Թայմ» թերթում, ի գիտություն հասարակության: Թերթում Մկրտիչ արքեպիսկոպոսի առաքելության հետ կապված հարցը լուրահատում ձևով է ներկայացված, շոշափված են հայ ժողովրդի՝ տվյալ ժամանակի մտահոգությունները և այլ հարակից հարցեր, որոնք պատրված են անգլիկան եկեղեցու դեկապատրիքի՝ այդ ժամանակաշրջանի մտահոգությունները: Դրահանության այս սեղմ է տեսակետից: Դժբախտարար այս սեղմ է շերի մեջ դժվար է մանրամանորեն անդրադառնալ այդ բոլոր հարցերին:

Հանդիպման վերջում բանաձևում են Մկրտիչ արքեպիսկոպոսի կողմից անգլիկաններին ուղղված մի կոչ և մի հայտարարություն, այն բարեկարգության մասին, որ կատարվում է Փոքր Աստվածայի հայոց եկեղեցիներում: Մկրտիչը որոշ գումար ապահոված վերադառնում է Այնթաք:

Մկրտիչ մեկնումից հետո հայ-անգլիկան եկեղեցու հիմնադրամի հանձնախումբի մի ներկայացուցիչը՝ կանոնիկոս Թրիստոնար, որ պաշտոնավարում էր Տարիմի ուսումնարաններից մեկում, 1881 թվականին մեկնում է Թուրքիայի այս գավառները, որտեղ սկսել էին անգլիկան եկեղեցուն հարելու շարժումները:

Մկրտիչ արքեպիսկոպոսի գործունեության մասին ամրողական տեղեկություններ ձեռք բերելու և այդ կապակցությամբ օտար ականատեսի վկայություններն ունենալու համար դիմել ենք կանոնիկոս Թրիստոնարի պատրաստած տեղեկագրին, որ նա չափազանցված գումարով է ներկայացնում անգլիկան եկեղեցու ունեցած հաջողությունները հայերին դավանակիու անելու գործում: Հայ նրա տեղեկագրի, բազմաթիվ գավառներում՝ Բիթլիսում, Խարբերդում, Սեբաստիայում, Քեսարում, Սոհյամանում, Ուրֆայում, Դիարբեքիրում և այլոր, բոլոր բողոքական համայնքները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի անգլիկան եկեղեցու աղյօթագիրքը և խնդրում Թրիստոնարին, որ իրենց համար ապահովի հովվեր, որպեսզի սովորեցնեն իրենց անգլիկան եկեղեցու դավանանքը և հավատքը:

Տեղեկագրի վերջում Թրիստոնարը Քենտրոնական արքեպիսկոպոսին առաջարկում է, որ Մկրտիչ արքեպիսկոպոսին նկատեն իրուն դեկապար այդ շարժման և մի քանի հովվեր ուղարկվեն Անգլիայից Թուրքիա,

որպեսզի շուտով բոլոր բողոքականները դատասան անզիկաններ:

Կանոնիկոս Թրիստոնարի այցը Թուրքիա և նրա գործունեությունն այսուել ամսարձերությամբ չի դիտվում ամերիկացի միսիոներների կողմից: Թղթակցությունների միջոցով սուր վեճեր են գնում Քենտրոնական արքեպիսկոպոսի և ամերիկացի միսիոներների միջև: Վերջիններս խնդրում են, որ անգլիկանները չխանգարեն իրենց միսիոներական գործունեությունը Թուրքիայում: Այդ մասին մեր ձեռքի տակ ունենք բավականին հետաքրքրական փաստեր, որոնց վրա սակայն չենք ուզում շատ ծանրանալ տեղի աղոթյան պատճառով:

Այսայսուհետեւ առաջարկից խվում է, թե Մկրտիչ արքեպիսկոպոսի եկեղեցին և նրա հովանավորած համայնքները ծաղկու վիճակում էին գտնվում, գեյթ այդպես էին ներկայացնում Մկրտիչն ինքը և Անգլիայում հատող հիմնադրամի ներկայացուցիչներն իրենց տեղեկագրերում: Սակայն իրականությունը բոլորովին այլ էր և նրանք ինքնախարեւության մեջ էին:

1882—1886-ի ժամանակաշրջանում մասնավոր ճիգեր են գործադրվում Մկրտիչ արքեպիսկոպոսին փրկելու համար կործանություն: Դիարբեքիրից Քենտրոնական արքեպիսկոպոսին ուղղված բազմաթիվ համախոսական գործունենքը ու դիմումներ սկսում են անպատճական մնալ, քանի որ 1882 թվականին Թեյթ արքեպիսկոպոսը, որ մասամբ հովանավորն էր այս շարժման՝ վախճանվում է: Կանոնիկոս Թրիստոնարի խոստումներից ոգևորված՝ Մկրտիչ արքեպիսկոպոսը Թեյթին հաջորդող արքեպիսկոպոսին համակներ է գրում Լոնդոն՝ սաելով, որ եթե ինքը իր կողքին անգլիացի միսիոներներ ունենա, կարծ ժամանակամիջոցում կկարողանա ամբողջ հայ եկեղեցին և բողոքական բոլոր հայ համայնքները դավանակիու անել և ինքն էլ դառնալ հայ անգլիկանների կաթողիկոսը կամ՝ արքեպիսկոպոսը: Այս իմաստում նա խնդրում է Քենտրոնական արքեպիսկոպոսի միջնորդությունը բարձր դռան մոտ: Քենտրոնական արքեպիսկոպոսի անստարելության համար նույնական ընտվում են մի քանի անգլիկան հոգևորականներ, այդ խվում և Թրիստոնարը ինքը, որը շատ խիստ համակներ է գրում վերջինիս: Սակայն բոլոր ճիգերը մնում են ապարդյուն:

1887—1890 թվականներին շարունակվում են նոյն խնդրանքները Քենտրոնական արքեպիսկոպոսին Թուրքիա, այսպես կոչված, հայ անգլիկանների կողմից, մինչև այն ժամանակ, երբ 1890 թվականից հետո Թուրքիայում խիստ հալածանքներ են սկսվում

թիստոնյաների նկատմամբ: Այս դեպքերը բնականաբար վաս են անդարդանում մի-սփռներական գործունեությանց վրա և պատճան դառնում, որ անգիլիան եկեղեցու կամ անգլիան հայ համայնքների դեկա-վարներից ոմանք 1894—1895 թվականների կոտորածների օրերին ապատում գրտ-նեն Անգլիայում: Կ. Սուէֆանչանը նա-հատակվում է, իսկ որիշներ լրում են իրենց հուր, այդ թվում և Մկրտիչ արքեպիսկո-պոսը, որին 1896—1898 թվականներին հանդիպում ենք Լոնդոնում:

Մկրտիչ արքեպիսկոպոսի ջանքերը, նոր կապեր ստեղծելու Թեյլոր արքեպիսկոպոսին հաջորդող Պետոն արքեպիսկոպոսի հետ՝ ապարդյուն են մնում: Դրույյունը համարում է այն բանին, որ նա Այնորպա վերադարձի իր ճանապարհածախար մեծ դժվարությամբ է ձեռք բերում անգիլիան եկեղեցու կողմից և հուսախար վերադառնում իր համայնքի մոտ:

Մկրտիչ արքեպիսկոպոսի անձնական դժվարությունները՝ նրա միակ զավակի մարդ, այնուհետև նրա կնոշ փախուստը, և անգիլիան եկեղեցու բացահայտորեն իր լրված լինելը վերջնականապես զգալ են տալիս նրան իր պարտությունը: Ահա այս բոլոր հանգամանքները, ինչպես նաև թոր-քերի կողմից քրիստոնյաների համաձանքներն ու հայ անգիլիան համայնքի կրած հուսախարությունները անգիլիան եկեղեցու և իշխանություններից, այս շարժումը տա-նում են դեպի անկում:

Մյուս կողմից՝ ամերիկյան Բողոքական տարբեր հարականանություններ, ինչպես՝ երիցականները, համայնականները և միջրո-չական-բողոքական ընկերությունները ա-ռուվել զրացնում են իրենց միխոներական առաքելությունը հայերի մեջ այդ շրջանում, ցույց տալով նրանց հյութական և բարոյա-կան ամեն աջակցություն: Հոռմեական կա-խոլիկ եկեղեցին ևս ուժեղացնում է իր քա-ռոզական աշխատանքները և այդսիսով պատճառ դառնում, որ Մկրտիչ արքեպի-կոպոսի համայնքի ուշադրությունը շեղվի դեպի վերջիններս: Խոչ Մկրտիչ արքեպի-կոպոսի հյութական վիճակը ոչ միայն չէր բարեկալվում, այլ օրըսորէ վատաքար-նում էր և նրա պարտքերը գնալով ավելա-նում էին:

Ի վերջո վրա են՝ հասնում հիվանդության ծանր օրերը և Մկրտիչ արքեպիսկոպոսը զրկվում է նաև պաշտամունքներ կատարելու հնարավորությունից: Նրա փոխարեն անգիլիան հայ համայնքի պաշտամունքները կատարում է Եղիշա Աթթարյան անոնով մի սարկավագ, որը նոր հարաբերությունների մեջ է մտնում անգիլիան եկեղեցու

դեկանավարների մետ: Մկրտիչ արքեպիսկո-պոսը համոզվելով, որ այլևս ոչ մի օգնու-թյուն չի կարելի ակնկալել Քենտրոնքի արքեպիսկոպոսից, իր հայացքն ուղղում է դեպի Յորքի արքեպիսկոպոսը, որին ուղ-ղած իր մի համակում գրված 1901 թ. հու-նիսի 21-ին (որ Մկրտիչ արքեպիսկոպոսի վերջին համակն է), նա շատ համառոտ կերպով շարադրում է իր համայնքի առա-շաման պատմությունը: Նամակում նա նշում է, որ արդեն մի տարի է, ինչ ինքը աշ կողմից անդամապուծված է և բացեկրաց խնդրում հյութական օգնություն համայնքի և անձամբ իր համար:

Նամակին պատասխանելուց առաջ Յոր-քի արքեպիսկոպոսը երկար մտածում և հարց ու փորձ է անում Մկրտիչ արքեպիս-կոպոսի մասին: Մի քանի տարի անց սար-կավագ Աթթարյանը 1904 թ. հունվարի 16-ի գրությամբ Քենտրոնքի արքեպիսկոպոսին հայտնում է Մկրտիչ արքեպիսկոպոսի մա-սիր: Նա իր համակը եզրափակում է հետև-յալ խորքերով. «Այս համակով, առանց ս-վելորդ ծևականության, դիմում ենք Ձերդ սրբազնության՝ խնդրելով հոգևորական ա-պահովել մեզ և մեր համայնքին հյութապես օգնել, որպեսզի մեր եկեղեցն կարողանա-շարունակել իր գոյությունը»:

Մի այլ համակում, գրված 1904 թվի փե-տրվարի 1-ին, նա կրկին շեշտում է իրենց համայնքի կազմալուծված վիճակը և իր գրությունը վերջացնում այսպես. «Անհնազն որոշ քայլեր պետք է անել՝ պահպանելու համար անգիլիան եկեղեցու այս ճուղը և պետք է փրկել նրա գոյությունը իբրև այդ-պիսին»:

Քենտրոնքի արքեպիսկոպոսը փետր-վար 6-ի իր պատասխան համակում մեկ-րնդմիշտ և հատակ կերպով արտահայտում է իր վերաբերմունքը դեպի հայ անգիլիան համայնքը ասելով, որ հնարավոր չէ: Իր համար օգնել Մկրտիչ արքեպիսկոպոսի համայնքին: Նա հշում է, որ ինքը մեկից ավելի անգամներ շեշտել է, որ կացությու-նը ամրողացվին փոխված է այն օրերից ի վեր, երբ Թեյլոր արքեպիսկոպոսը օգնում էր և քաշակերում Մկրտիչ արքեպիսկոպոսին՝ առաջ տանելու համար այդ շարժումը: Այն ժամանակ, որ միակ հնարավոր գիծն էր բարեկալության: Քենտրոնքի արքեպիս-կոպոսը բացահայտորեն հասկացնում է, որ անգիլիան եկեղեցին այժմ աշխատում է իր լավագույն հպատակ բերել ամրող հայ ե-կեղեցու ներքին բարեկալությունների շարժ-ման գծով, առավել լավ կրթություն տալու ուղղությամբ թե՛ աշխարհականներին, և թե՛ հոգևորականներին: «Այսպիսով, —ասում է նա, —մեր գործունեության այս նոր գիծը, որ

նկատի ունի Արևելյան եկեղեցների կողմանց մեջ ուղղված հրավերը՝ օգնելու իրենց, բոլորովին տարբեր է նախորդ շրջանից»: Այլ խոսքով՝ արքեպիսկոպոսը չի բաշակարում հայ եկեղեցու մեջ գոյություն ունեցող բաժանումները: Վերջում հայ առաջարկում է այս հարցով դիմել Երրուաղեմի անգիլիան եպիսկոպոսին:

Հուլիսի 23-ին Այնթապից Լոնդոն ուղարկված մի համակ հայտնում է, որ անգիլիան հայ համայնքը կազմադրման ընթացքի մեջ է: Այնուամենայնիվ համայնքի դեկապարները վճռականություն են հայտնում շարունակելու իրենց գոյությունը իրեն անկախ եկեղեցի:

Իրենց դրությամ մասին անգիլիան այնթապիցները գրում են Երրուաղեմի անգիլիան եպիսկոպոսին և ստանում մի պատասխան, որի մեջ առաջարկվում էր, որ համայնքն իրեն դնի ամերիկյան միսիոներների վերաբերյալ ուժան ներքո:

Հայ անգիլիան փոքրաթիվ համայնքի դեկապարները իրարականություն նամակներով իրենց վճռականությունն են հայտնում Քենտուրերի արքեպիսկոպոսին, կապված

մնալու անգիլիան եկեղեցու դավանությունից:

Այնթապի և Մարաշի հայ անգիլիանների վերջին նովիկը՝ Գրիգոր Քեշիշյանը, 1905 թվականի նովիսի 21-ի իր համակում օգնություն է պահանջում անգիլիան եկեղեցու դեկապարներից: Համակը մնում է անպատճական:

1905 թվականին հայ անգիլիանների կիսակառուց եկեղեցին փորձում են գնել ֆրանցիսկյան ուսուին պատկանող կաթոլիկ միսիոններները: Նրանք թղթակցություններ են սկսում Քենտուրերի արքեպիսկոպոսի, Անգլիո ֆրանչիական դեսպանի և Հայեափի անգիլիան հյուպատոսի հետ: Խննիքը հասնում է մինչև Զիքրալթարի Անգլիայի եպիսկոպոսին, որը պետք է, թե եկեղեցու մասին որևէ որոշում հնարավոր չէ առնել ստանց Անգլիո մեջ գոյություն ունեցող այդ եկեղեցու Բիմնադրամի, որի դեկապարն էր Թրիստրամը:

Բացի Զիքրալթարի եպիսկոպոսի այս համակից, որն ուղղված է Քենտուրերի արքեպիսկոպոսին, որիշ որևէ փաստաթուղթ չկա հայ անգիլիան եկեղեցու ապագա վիճակի մասին:

